ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի հուլիսի 26-27-ը Իրանի Իսլամական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը
   Գեորգի Ավետիսյան

2. Զբաղեցրած պաշտոնը
   ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. Գործուղման վայրը / ժամկետները
   Իրանի Իսլամական Հանրապետություն, քաղաք Թեհրան, 2019 թվականի հուլիսի 26-27

4. Հրավիրող կողմը
   Իրանի Իսլամական Հանրապետության գյուղատնտեսության նախարարության Իրանի անասնաբուժական կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

   Գործուղման նպատակն էր ձեռք բերել պայմանավորվածություն՝ Հայաստանի Հանրապետությունից՝ Քաթար, Քուվեյթ և Իրաք Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով կենդանի կենդանիների, կենդանական ծագման մթերքների և անասնաբուժական ենթահսկման արտադրանքների տարանցիկ արտահանման հնարավորությունների վերաբերյալ, ինչպես նաև քննարկել անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առևտրային ապրանքաշրջանառության շրջանակների ընդլայնման հարցեր:

6. Քննարկված թեմաները
   Քննարկվել են մանր եղջերավոր կենդանիների հիվանդությունների վերահսկողության, դրա շրջանակներում համատեղ աշխատանքային խմբի ձևավորման, անասնաբուժական սերտիֆիկատների նախաստորագրման հարցերը, ինչի արդյունքում հնարավոր կլինի մանր և խոշոր եղջերավոր կենդանիների արտահանումը Հայաստանի Հանրապետությունից այլ երկրներ՝ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի է ունեցել հանդիպում Իրանի անասնաբուժական կազմակերպության ղեկավարի տեղակալի հետ, հանդիպման ընթացքում քննարկվել են մի շարք ոլորտային առաջնահերթություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման հիմնական նպատակին համապատասխան՝ սահմանվել են հիմնական գործողությունները, ինչպես նաև ձեռք է բերվել պայմանավորվածություն իրանական կողմից համապատասխան մասնագետների այցը ՀՀ ապահովելու կապակցությամբ՝ կենդանիների կարանտինային կետերում աուդիտ իրականացնելու նպատակով: Հանդիպման ընթացքում որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Որպես առաջարկություն և ակնկալվող արդյունք նախանշվել է պայմանավորվածությունը՝ ողջամիտ և հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովելու Հայաստանի Հանրապետությունից՝ Քաթար, Քուվեյթ և Իրաք Իրանի Իսլամական Հանրապետության տարածքով կենդանի կենդանիների, կենդանական ծագման մթերքների և անասնաբուժական ենթահսկման արտադրանքների տարանցիկ արտահանման, ինչպես նաև անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում Իրանի Իսլամական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առևտրային ապրանքաշրջանառության շրջանակների ընդլայնման հնարավորությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

30 հուլիսի, 2019 թ.